

ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՐԻՄԻՆԱԼ ՎԻԿՏԻՄԻԶԱՑԻԱՅԻ ՎԻՃԱԿԻ ՇՈՒՐՋ

ԱՐԱ ԳԱՔՈՒՁՅԱՆ

Հանցավորության հանրային վտանգավորության գնահատման չափանիշների մեջ, բացի հանցավորության կառուցվածքից ու մակարդակից, էական նշանակություն ունի նաև բնակչության վիկտիմիզացիայի¹ մակարդակը: Այն թույլ է տալիս պատկերացում կազմելու հանցավորության իրական «արժեքի» մասին, գնահատելու բնակչության պաշտպանվածության մակարդակը, պետության կողմից մարդու իրավունքների ու ազատությունների ապահովման իր պարտականությունը կատարելու վիճակը: Բացի այդ՝ բնակչության վիկտիմիզացիայի մակարդակի, դրանում տեղի ունեցող փոփոխությունների, այդ փոփոխություններին նպաստող գործոնների վերլուծությունը հնարավորություն է տալիս խոր պատկերացում կազմելու հանցավորության և հանցագործությունների առանձին տեսակների վիկտիմոլոգիական գործոնների մասին և դրա հիման վրա հանցավորության վիկտիմոլոգիական կանխման արդյունավետ միջոցներ մշակելու:

Բնակչության վիկտիմիզացիայի մակարդակը կարելի է վերլուծել մի քանի ցուցանիշներով՝ հանցագործություններից տուժած անձանց քանակով, վիկտիմիզացիայի գործակիցներով, հանցագործությունների առանձին տեսակներից տուժածների քանակով և վիկտիմիզացիայի գործակիցներով, հանցավոր վարքագծի մոտիվացիայի տարբեր տեսակներով կատարվող հանցագործություններից տուժածների վերաբերյալ համապատասխան տվյալներով²:

Նշված ցուցանիշների վերլուծությունը կարելի է իրականացնել ինչպես պաշտոնական վիճակագրությամբ արձանագրված տվյալների ու քրեական գործերի ուսումնասիրության, այնպես էլ լատենտային հանցավորության բացահայտմանն ուղղված հետազոտությունների հիման վրա: Ըստ այդմ, անհրաժեշտ է նշել, որ պաշտոնական վիճակագրության տվյալները երբեք չեն արտացոլում իրականությունը, որովհետև հանցավորության զգալի մասը լատենտային է մնում, ուստի լատենտային են մնում նաև տուժողները: Մեր կողմից կատարված հետազոտությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ ՀՀ-ում լատենտային է մնում հանցավոր-

¹ Վիկտիմիզացիան հասկացվում է երկու իմաստով՝ 1) որպես հանցագործությունից (հանցավորությունից) տուժելու գործընթաց, 2) որպես բնակչության՝ հանցագործություններից տուժելու մակարդակ, որը ցույց է տալիս հասարակության քրեականացման իրական վիճակը:


² Տե՛ս **Ситковский А. Л.** Анализ криминальной виктимизации в Российской Федерации и мнения граждан о личной безопасности. Государственная система профилактики правонарушений: современное состояние и перспективы развития // Материалы межведомственной научно-практической конференции. М., 2007, էջ 413:

րության մոտ 70%-ը³: Ուստի բնակչության վիկտիմիզացիայի մակարդակի վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալների վերլուծությամբ կարելի է տալ բնակչության վիկտիմիզացիայի միայն մոտավոր պատկերը: Այնուամենայնիվ, պաշտոնական վիճակագրության տվյալները հանցավորության զարգացման միտումների, երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, քաղաքական, իրավական, գաղափարախոսական, մշակութային գործընթացների հետ համադրելու միջոցով կարելի է որոշակի պատկերացում կազմել վիկտիմիզացիայի միտումների վերաբերյալ:

ՀՀ-ում բնակչության վիկտիմիզացիայի մակարդակի՝ պաշտոնական վիճակագրությամբ ամրագրված տվյալների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այն աճի միտում է դրսևորում: Այսպես, եթե 2004 թ. պաշտոնական վիճակագրությամբ գրանցվել է հանցագործություններից տուժած 2672 մարդ, ապա 2005 թ.՝ 3119, իսկ 2010 թ.՝ 6746 մարդ: Թեև այս տվյալները վերաբերում են միայն այն դեպքերին, երբ պաշտոնական վիճակագրության մեջ տուժողները նշված են, որը կարող է նաև տուժողների մասին ավելի ամբողջական տվյալներ ներկայացնելու արդյունք լինել, այնուամենայնիվ, նկատի ունենալով հանցավորության մակարդակի աճը, կարելի է հավաստել, որ վերջին տարիներին հանցագործություններից տուժածների քանակն ավելանում է: Ընդ որում, 2004-ի համեմատությամբ 2010 թ.-ին այն աճել է 2,5 անգամ⁴ (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1

ՀՀ-ում կրիմինալ վիկտիմիզացիայի մակարդակը բացարձակ թվերով



³ Տե՛ս Գաբուջյան Ա. Ա. Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ер., 2007, էջ 14:

⁴ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ բնակչության թվաքանակի վերաբերյալ հավաստի տվյալներ չկան, վիկտիմիզացիայի մակարդակը գործակիցներով չենք հաշվել: Միևնույն ժամանակ, քանի որ վերջին տարիներին խոսվում է միգրացիայի բացասական ցուցանիշի մասին, ուստի կարելի է ենթադրել, որ վիկտիմիզացիայի մակարդակն իրականում ավելի բարձր է:

Պետք է նշել մի կարևոր օրինաչափության մասին. **բնակչության վիտիմիզացիայի մակարդակի աճի տեմպերը գերազանցում են հանցավորության աճի տեմպերը**: Եթե 2010 թ. 2004 թ. համեմատ վիկտիմիզացիայի մակարդակն աճել է 2,5 անգամ, ապա հանցավորության մակարդակն այդ նույն տարիներին աճել է 1,5 անգամ: Այս հանգամանքը կարելի է գնահատել որպես հանցավորության հանրային վտանգավորության աստիճանի բարձրացման միտում: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր հանցագործությունից ամեն տարի ավելի շատ մարդ է տուժում: Նման իրադրությունը պայմանավորված է հանցավորության կառուցվածքում տեղի ունեցող փոփոխություններով: Քննարկվող ժամանակահատվածում հանցավորության կառուցվածքում ավելացել է մարդու (անձի) դեմ ուղղված հանցագործությունների տեսակարար կշիռը: Այսպես՝ 2010 թ. այս հանցագործությունները 2004 թ. համեմատ ավելացել են 51,2%-ով: Արձանագրվում է նաև հասարակական կարգի և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների առանձին տեսակների աճի միտում: Մասնավորապես, հասարակական անվտանգության, հասարակական կարգի և բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններն ավելացել են 52,2%-ով, գողությունները՝ մոտ 30%-ով, կողոպուտները՝ 47%-ով, խարդախությունները՝ 30%-ով: Մինչդեռ միևնույն ժամանակահատվածում նվազել են պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված որոշ հանցագործություններ: Այսպես՝ պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 2009 թ. 2008 թ. համեմատ 11,1%-ով նվազել են կաշառակերության, 21,5%-ով՝ պաշտոնեական լիազորությունները չարաչափելու դեպքերը: Բացի այդ, վերջին տարիներին նկատվում է հափշտակության այնպիսի տեսակի նվազման միտում, ինչպիսին է յուրացումը կամ վատնումը (2010 թ. 2009 թ. համեմատ այս հանցատեսակը նվազել է 23,7%-ով): Այսպիսով՝ մեր հետազոտությամբ նույնպես ապացուցվում է այլ մասնագետների կողմից բացահայտված այն օրինաչափությունը, որ հանցագործություններից զոհերի թիվն ավելի շատ է այնտեղ, որտեղ աճում է այնպիսի հանցագործությունների մակարդակը, որոնցում առկա է անմիջական շփումը հանցավորի և զոհի միջև⁵:

Տուժողների քանակի ավելացումը կարող է պայմանավորված լինել նաև նրանով, որ առանձին հանցատեսակների դեպքում կոնկրետ մեկ անձի կողմից իրականացված հանցավոր գործունեության զոհ են դառնում մեծ թվով մարդիկ, մինչդեռ հանցավոր գործունեության տվյալ տեսակի օրենսդրական կարգավորման առանձնահատկությունների պատճառով պաշտոնական վիճակագրության մեջ այն արտացոլվում է որպես մեկ հանցագործություն: Մասնավորապես, երկու կամ ավելի խարդախություն կատարած անձի արարքը քննարկվող ժամանակահատվածում որակվում էր որպես կրկնակի խարդախություն, որը վիճակագրության մեջ նշվում էր որպես մեկ հանցանք, այնինչ հանցավոր գործունեության զոհ են դառնում մեկից ավելի, նույնիսկ մի քանի տասնյակ անձինք: Ակնհայտ է, որ խարդախության մակարդակի աճի հետ մեկտեղ զոհերի թիվն ավելանում է,

⁵ Տե՛ս **Курн Х.** Развитие преступности, санкции и позиция населения // «Уголовное право и преступность. Развитие в Средней и Восточной Европе». Бохум, 2004, էջ 14:

ընդ որում՝ հանցագործության դեպքերի նույնիսկ չնչին աճը կարող է հանգեցնել զոհերի թվի մի քանի անգամ ավելացման: Նշվածն ապացուցվում է նաև պաշտոնական վիճակագրության տվյալներով: Այսպես՝ քննարկվող ժամանակահատվածում խարդախության զոհ դարձած անձանց քանակը 1,3-ից 2 անգամ գերազանցել է գրանցված դեպքերի քանակը: Գրեթե նույն պատկերն է նաև մյուս հանցագործությունների դեպքում:

Վիկտիմիզացիայի առանձնահատկությունների հետ կապված կարևոր գործոն են հանցագործություններից տուժածների սոցիալ-ժողովրդագրական հատկանիշները: Դրանց բացահայտումը թույլ կտա հանցավորության և դրա առանձին տեսակների վիկտիմոլոգիական կանխմանն ուղղված միջոցառումներն իրականացնել հասցեագրված ու բարձրացնել դրանց արդյունավետությունը:

Նշված հատկանիշները վերլուծությունը իրականացվել է հանցավորության միջուկը կազմող որոշ հանցագործությունների (սպանություն, առողջությանը վնաս պատճառել, խուլիգանություն, սեռական հանցագործություններ, ավազակություն, շորթում, կողոպուտ, գողություն, խարդախություն) վիճակագրական տվյալների հիման վրա: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ հանցագործություններից ավելի հաճախ տուժում են տղամարդիկ, որոնց տեսակարար կշիռը տուժողների ընդհանուր զանգվածի մեջ կազմում է 53-54%: Միևնույն ժամանակ, հանցագործությունների առանձին տեսակներից տուժողների զանգվածում այս հարաբերակցությունը փոխվում է: Մասնավորապես՝ պաշտոնական վիճակագրության համաձայն՝ կանայք ավելի հաճախ տուժում են այնպիսի հանցագործություններից, ինչպիսիք են կողոպուտը, սեռական հանցագործությունները, որոշ տարիներին՝ դիտավորյալմբ առողջությանը թեթև վնաս պատճառելը: Այսպես, կողոպուտներից կանայք տղամարդկանց համեմատ երկուսից երեք անգամ ավելի հաճախ են տուժում, սեռական հանցագործություններից՝ հինգից տասնհինգ անգամ, առողջությանը թեթև վնաս պատճառելուց՝ մոտ մեկ և կես անգամ: Նման իրավիճակը պայմանավորված է հանցագործության այս կամ այն տեսակի առանձնահատկություններով: Ակնհայտ է, օրինակ, որ կողոպուտներից կանանց ավելի հաճախ տուժելը պայմանավորված է նրանով, որ կանանց մոտ ավելի հաճախ են լինում բացահայտ կրվող թանկարժեք զարդեր, պայուսակ, որոնց հնարավոր է պոկումով տիրանալ: Բացի այդ, կանայք իրենց ֆիզիկական հնարավորություններով պակաս ունակ են դիմագրավելու այս հանցագործությանը, և նման դեպքերում հնարավոր դիմադրության պակաս հավանական լինելը հանցավոր վարքագծի մոտիվացիայի էական տարրերից է: Ինչ վերաբերում է առողջությանը թեթև վնաս պատճառելու դեպքերին, ապա այստեղ, մեր կարծիքով, էական նշանակություն ունի այն, որ վերջին տարիներին ֆեմինիստական շարժումների ակտիվացման պատճառով կանայք ավելի հաճախ են ընտանեկան բռնության մասին հայտնում իրավապահ մարմիններին: Պետք է նշել, սակայն, որ պաշտոնական վիճակագրության այս տվյալները չեն կարող լիովին հավաստի համարվել: Բանն այն է, որ շատ դեպքերում կանանց վիկտիմիզացիան լատենտային է մնում, որովհետև կանայք ավելի քիչ են հակված դիմելու իրավապահ մարմիններին: Այս

օրինաչափությունը բացահայտվել է որոշ հետազոտողների կողմից⁶:

Հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտի չափանիշներից է երեխաների, հաշմանդամների, ծերերի նկատմամբ վերաբերմունքը: Հանցագործություններից տուժածների պաշտոնական վիճակագրության տվյալները այս առումով նտահոգիչ են: Այսպես, 2010 թ. 2004 թ. համեմատ հանցագործություններից անչափահասների տուժելու դեպքերը աճել են մեկ և կես անգամ, ընդ որում՝ հանցագործություններից մահացած անչափահաս տուժողների քանակը նույն ժամանակահատվածում ավելացել է 65%-ով: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ վերջին տարիներին աճել է նաև անչափահասների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների քանակը: Սա, մեր կարծիքով, ավելի շատ դպրոցների և մանկական այլ հաստատությունների նկատմամբ հասարակական վերահսկողության ուժեղացման և դրա հիման վրա նշված հանցագործությունների բացահայտման մակարդակի աճի արդյունք է: Չի բացառվում, սակայն, որ հասարակությունում տեղի ունեցող բացասական բարոյահոգեբանական երևույթների պատճառով այս հանցագործությունների քանակն իրոք ավելացել է: Դրան կարող են նպաստել և՛ սեռական դաստիարակության ոլորտում տեղ գտած թերությունները, և՛ ՁԼՄ-ների բացասական ազդեցությունը, և՛ անձի միկրոմիջավայրում տեղի ունեցող երևույթները:

Ինչ վերաբերում է հաշմանդամներին, գործազուրկներին ու թոշակառուներին, ապա վերջին տարիներին նկատվում է տուժողների զանգվածում նրանց տեսակարար կշռի նվազում: Սա կարող է պայմանավորված լինել վերջին տարիներին մասնավորապես թոշակառուների թվի նվազմամբ, գործազուրկների մի զգալի մասի արտագաղթով, ինչպես նաև հանցագործություններից տուժողների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության ոչ լրիվությամբ: Բանն այն է, որ պաշտոնական վիճակագրության մեջ հանցագործություններից տուժողների վերաբերյալ տվյալները մեծ մասամբ բացակայում են: Նման վիճակը ոչնչով չի նպաստում հանցավորության իրական պատկերը, դրա հանրային վտանգավորությունը բացահայտելուն և վերջին հաշվով հանցավորության կանխման արդյունավետ միջոցառումների մշակմանը: Կարծում ենք՝ ճիշտ կլիներ վարչարարական մեթոդներով հարկադրել իրավակիրառողներին՝ հանցագործություններից տուժողների վերաբերյալ հնարավոր տեղեկատվությունը ամբողջականորեն արտացոլելու համապատասխան վիճակագրական քարտեռում: Ինչևէ, եթե նույնիսկ պաշտոնական վիճակագրության տվյալները արտացոլում են իրականությունը, այնուամենայնիվ պետք է նկատի ունենալ, որ թոշակառուներն ու ծերերը առավել խոցելի խումբ են թեկուզ այն պատճառով, որ իրենց ֆիզիկական, առողջական վիճակի, հաճախ սոցիալական մեկուսացման պատճառներով ավելի հեշտորեն կարող են դառնալ հանցագործության զոհ և ավելի մեծ վնաս կրել, ուստի այս սոցիալական շերտին պետք է հատուկ ուշադրություն դարձնել:

Վերջին տարիներին հանցագործություններից տուժածների մեջ ավելանում է օտարերկրացիների քանակը: Այսպես, եթե 2004 թ. գրանցվել է


⁶ Стен **Вишневецкий К. В.** Криминогенная виктимизация социальных групп в современном обществе. М., 2010, էջ 86:

հանցագործության 57 դեպք, որից տուժել են օտարերկրացիները, ապա 2010 թ.՝ արդեն 136 դեպք: Ակնհայտ է, որ միջպետական կապերի ընդլայնման, գլոբալացման պայմաններում կարելի է սպասել օտարերկրացիների դեմ կատարվող հանցագործությունների աճ: Այս միտումները, մեր կարծիքով, պետք է վիկտիմոլոգիական կանխման միջոցառումների իրականացման նոր ուղղության մշակման հիմք դառնան:

Անդրադառնանք հանցագործությունների առանձին տեսակներից վիկտիմիզացիայի միտումներին: Պաշտոնական վիճակագրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին նկատվում է սպանություններից և սպանության փորձերից տուժողների քանակի նվազում (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2

Սպանությունից և սպանության փորձերից տուժողների քանակը ըստ տարիների




Ինչպես երևում է գծապատկերից, 2010 թ. սպանություններից և դրա փորձերից տուժածների քանակը 2004 թ. համեմատ ուղիղ երկու անգամ պակաս է: Ուստի անչափ կարևոր է բացահայտել ընդհանրապես բռնի-ազդեցիկ մոտիվացիայով կատարվող հանցագործություններից վիկտիմիզացիայի միտումները: Դրա համար, բացի սպանությունից, ընտրել ենք բռնի-ազդեցիկ մոտիվացիայով կատարվող առավել տարածված հանցագործությունները՝ դիտավորությամբ առողջությանը ծանր, միջին ծանրության և թեթև վնաս պատճառելը, բռնաբարությունը, սեքսուալ բնույթի բռնի գործողությունները, խուլիգանությունը:

Ինչ վերաբերում է սեռական հանցագործություններին, ապա դրանցից տուժածների քանակը չնչին է՝ 22-33 տուժող: Իհարկե, պետք է հաշվի առնել նաև այս հանցագործությունների լատենտայնությունը:

Ի տարբերություն սեռական հանցագործությունների՝ առողջությանը վնաս պատճառելուց վիկտիմիզացիան աճի միտում է դրսևորում, ինչը երևում է գծապատկեր 3-ում:

Առողջությանը վնաս պատճառելու դեպքերից տուժածների քանակը



Պետք է նշել սակայն, որ այս աճի միտումը տեղի է ունեցել հիմնականում առողջությանը թեթև վնաս պատճառելու դեպքերի աճի հաշվին: Կարելի է ենթադրել, որ կան իրականում առողջությանը ծանր և միջին ծանրության վնաս պատճառելու դեպքերը նվազել են, կան էլ խնդիրը հանցագործությունների գրանցման մեջ է: Սպանությունների նվազման համապատկերում առողջությանը ծանր և միջին ծանրության վնաս պատճառելու դեպքերի նվազումը իրական է թվում: Միևնույն ժամանակ հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնական վիճակագրությունը ամբողջությամբ օբյեկտիվ պատկերը չի տալիս: Մասնավորապես, սպանությունների լատենտայնության ցուցանիշներից է անհայտ կորածների քանակը: Պետք է նշել, որ 2008 և 2009 թթ. դրանց քանակը որոշակիորեն ավելացել է, իսկ 2010 թ.՝ պակասել: Սակայն խնդիրն այն է, որ հայտնաբերված անհայտ կորածների թիվը ամեն տարի կազմում է անհայտ կորածների գրեթե կեսը⁷: Այսինքն՝ անհայտ կորածների մոտ 50%-ի ճակատագիրը անհայտ է մնում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անհայտ կորածների մեջ որոշակի տոկոս են կազմում սպանության զոհերը: Այսպես, 1999 թ. անհետ կորչելու կապակցությամբ հարուցված քրեական գործերից երկուսում բացահայտվել է, որ անհայտ կորածը սպանության զոհ է դարձել, իսկ մնացած դեպքերում լրիվ և բազմակողմանի քննության բացակայության պատճառով չեն բացահայտվել մարդկանց կորչելու հանգամանքները⁸: Ինչ վերաբերում է առողջությանը ծանր վնաս պատճառելուն, ապա դրա լատենտայնության մակարդակի բարձրացման մասին անուղղակիորեն կարող է վկայել հանցագործություններից, դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից մահացածների վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը: Այսպես, 2004 թ. համեմատ 2010 թ. հանցագործություններից մահացածների թիվն ա-

⁷ Տե՛ս «ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն-տեղեկատվական նյութեր», Եր., 2010:

⁸ Տե՛ս ՀՀ գլխավոր դատախազության 1999 թ. մայիսի 26-ի թիվ 4 նիստի արձանագրությունից:

ճել է 7,1%-ով, իսկ դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից մահացածների թիվը՝ 20,5%-ով: Այնինչ նույն ժամանակահատվածում առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերը նվազել են 20%-ով: Իհարկե չի կարելի անվերապահորեն պնդել, որ այս միտումները վկայում են դիտավորությանը առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի լատենտայնության մակարդակի բարձրացման մասին: Բայց նման վարկածը գոյության իրավունք ունի, մանավանդ եթե հաշվի առնենք, որ վերջին տարիներին, ըստ պաշտոնական վիճակագրության, նկատվում է նաև մահացու ելքով ճանապարհատրանսպորտային պատահարների քանակի նվազում, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից մահացածների՝ պաշտոնական վիճակագրությամբ արձանագրվող աճը անուղղակիորեն վկայում է առողջությանը ծանր վնաս պատճառելու լատենտայնության մակարդակի բարձրացման մասին: Նշված հանցատեսակի մակարդակի նվազումը և լատենտայնության մակարդակի բարձրացումը կարող են պայմանավորված լինել նաև արարքների որակման մեջ տեղ գտած սխալներով, երբ դիտավորությամբ առողջությանը ծանր վնասի պատճառումը որակվում է որպես անզգուշությամբ ծանր վնասի պատճառում: Բացի այդ, վերջին տարիներին ՀՀ-ում նկատվում է ինքնասպանությունների ամնախադեպ աճ: Սա նշանակում է, որ բռնության և ագրեսիայի մակարդակը հանրապետությունում իրականում չի նվազել: Դրա անուղղակի ապացույց են նաև խուլիգանության ու ավազակային հարձակումների ցուցանիշները: Վերջինս, թեև դասվում է բռնի-շահադիտական մոտիվացիայով հանցագործությունների թվին, այնուամենայնիվ նաև բռնի-ագրեսիվ մոտիվացիայի յուրահատուկ դրսևորում է:

Ինչ վերաբերում է խուլիգանությանը, ապա դրա շարժընթացը, ըստ պաշտոնական վիճակագրության, սղոցածն է. որոշակի տարիների աճին հաջորդում է նվազում, ապա՝ նորից աճ: Այսպես, 2007 թ.-ին խուլիգանությունից տուժածների քանակը 2006 թ. համեմատ նվազել է 83-ով, 2008 թ.-ին 2007 թ. համեմատ աճել է 24-ով, 2009 թ.-ին 2008 թ. համեմատ նվազել է 21-ով, իսկ 2010 թ.-ին 2009 թ. համեմատ աճել է 38-ով: Գրեթե նույն պատկերն է ավազակային հարձակումների դեպքում: Ընդ որում, 2007 թ. համեմատ 2008 և 2009 թթ. արձանագրվել է դրանց մոտ երկու անգամ աճ, իսկ 2010 թ.՝ որոշակի նվազում:

Հաշվի առնելով հանրապետությունում տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական բացասական որոշ գործոններ (մասնավորապես՝ տնտեսական ճգնաժամ, ընտրությունների հետ կապված որոշակի քաղաքական գործընթացներ և այլն), կարելի է կանխատեսել, որ բռնի-ագրեսիվ մոտիվացիայով կատարվող հանցագործությունների և դրանցից վիկտիմիզացիայի շարժընթացը ապագայում ևս անբարենպաստ կլինի՝ որոշակի տարիներին նվազման միտումներով:

Բռնությամբ զուգորդված հանցագործություններից տուժողների պաշտոնական վիճակագրության մեջ արտացոլված որոշ առանձնահատկությունների վերլուծությունը թույլ տվեց բացահայտելու հետևյալ օրինաչափությունները: Ինչպես և սպասվում էր, հատկապես ավազակություններից և խուլիգանություններից ավելի հաճախ տուժում են տղամարդիկ: Առանձին տարիների բացառությունները չհաշված՝ նույն պատկերն է նաև սպանություններից, առողջությանը վնաս պատճառելուց և շորթումից տու-

Ժածների կապակցությամբ: Առողջությանը վնաս պատճառելուց տուժածների մեջ քիչ չեն նաև գործազուրկներն ու թոշակառուները: Սա կարելի է բացատրել նշված անձանց սոցիալական վիճակով, դրանից բխող միջանձնային և ներընտանեկան հարաբերությունների լարվածությամբ:


Հանցավորության կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռը բնութագրական է շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործություններին: Աշխարհի գրեթե բոլոր երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, նշված մոտիվացիայով կատարվող հանցագործությունները 70-90% են: Ու թեև բռնությամբ չզուգորդված շահադիտական հանցավորությունը, թեև համեմատաբար պակաս վտանգավոր բնույթ ունի, այնուամենայնիվ դրա պատճառած նյութական և բարոյական վնասը բավականաչափ զգալի է: Շահադիտական հանցավորությունը (հատկապես կոռուպցիոն հանցավորությունը) կարող է կազմալուծել պետական մարմինների գործունեությունը, նպաստել կազմակերպված հանցավորության ու ստվերային տնտեսության ձևավորմանը, արգելակել տնտեսության զարգացումը, հանգեցնել բնակչության կենսամակարդակի նվազմանը, բարոյահոգեբանական մթնոլորտի ձևախեղմանը և վերջին հաշվով՝ սպառնալ ազգային անվտանգությանը: Ուստի այս հանցագործություններից վիկտիմիզացիայի առանձնահատկությունների բացահայտումը անչափ կարևոր է:

Շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործություններից վիկտիմիզացիայի միտումները բացահայտելու համար վերլուծել ենք առավել տարածված հետևյալ հանցագործությունները՝ գողություն, կողոպուտ, խարդախություն: Քանի որ պաշտոնական վիճակագրության մեջ շատ են այն դեպքերը, երբ նշված հանցագործություններից տուժածների մասին չի նշվում, այս հանցագործություններից վիկտիմիզացիայի միտումների վերլուծությունն իրականացրել ենք պաշտոնական վիճակագրության մեջ արտացոլված հանցագործությունների շարժընթացի հիման վրա:

Քննարկվող ժամանակահատվածում գողությունների շարժընթացը երևում է գծապատկեր 4-ում:

Գծապատկեր 4


Գողությունների շարժընթացը բացարձակ թվերով



Ակնհայտ է քննարկվող ժամանակահատվածում գողությունների աճի միտումը: Բնականաբար աճում է նաև վիկտիմիզացիայի մակարդակը: Ընդ որում, վերջին տարում գրանցված չնչին նվազումը էական չի կարող համարվել և չի կարող ազդել գողությունների և ընդհանրապես շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների շարժընթացի ընդհանուր գնահատականի վրա, որովհետև 2010 թ. գողությունների չնչին նվազումն ուղեկցվում է խարդախությունների աճով, ինչը երևում է գծապատկեր 5-ում:

Գծապատկեր 5

Խարդախությունների շարժընթացը բացարձակ թվերով



Նույն վիճակն է արձանագրվում ՌԴ-ում⁹: Սա պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ առևտրային կազմակերպությունների թվի ու տնտեսվարող սուբյեկտների միջև մրցակցության աճ, ֆինանսատնտեսական գործարքների քանակի ավելացում, սնանկության հավանականության մեծացում, տնտեսական ճգնաժամ և այլն: Հաշվի առնելով նշված երևույթների խորացման հավանականությունը՝ կարելի է ենթադրել, որ ապագայում ևս պետք է սպասել խարդախությունների աճ:

Եթե ասվածին ավելացնենք նաև այն, որ վերջին տարիներին պաշտոնական վիճակագրությունն արձանագրում է կոռուպցիոն հանցագործությունների աճ¹⁰, ապա պարզ կդառնա, որ հանրապետությունում տեղի է ունենում շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործություններից վիկտիմիզացիայի մակարդակի բարձրացում:

Հետաքրքրություն են ներկայացնում քննարկվող հանցագործություններից տուժողների առանձնահատկությունները: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ թե՛ գողություններից և թե՛ խարդախություններից

⁹ Տե՛ս Ситковский А. Л., նշվ. աշխ., էջ 417-418:

¹⁰ Տե՛ս ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009 և 2010 թթ. հունվար-դեկտեմբերին: www.armstat.am.

տուժածների թվում ավելի հաճախ են հանդիպում գործազուրկներն ու թոշակառուները: Ընդ որում, գործազուրկների տեսակարար կշիռն ավելի մեծ է խարդախությունների պարագայում: Սա կարելի է բացատրել գործազուրկի հոգեբանական վիճակով, ով հաճախ, անելանելիության զգացում ապրելով, փորձում է ամեն ինչ անել վիճակից դուրս գալու համար և դիմում է տարբեր գործարքների, ինչից օգտվում են խարդախները:

Վերը նշվածը թույլ է տալիս եզրակացնելու, որ Հայաստանի Հանրապետությունում կրիմինալ վիկտիմիզացիայի մակարդակը կայուն աճի միտում է դրսևորում: Դրան նպաստում են ոչ միայն հանցավորության աճը խթանող այնպիսի ավանդական գործոններ, ինչպիսիք են սոցիալ-տնտեսական բևեռացումը, գործազրկությունը, աղքատությունը, բարոյահոգեբանական մթնոլորտի ձևախեղումը, մշակութային և իրավական գործոնները, այլև հանցավորության և դրա առանձին տեսակների կանխարգելման այդ թվում՝ վիկտիմոլոգիական կանխման ոլորտում տեղ գտած առանձին բացթողումները: Պետք է նշել, որ հանրապետությունում դեռևս բավարար չափով ուշադրություն չի դարձվում այս խնդրին. բնակչության վիկտիմոլոգիական գիտելիքների մակարդակը ցածր է, իսկ հանցավորության կանխման խնդիրն իրականացնող պետական մարմինները, թեև այս ուղղությամբ արդեն որոշ քայլեր ձեռնարկում են, սակայն դրանք դեռևս չունեն համակարգված բնույթ: Բացի այդ, սակավ են հանցավորության վիկտիմոլոգիական խնդիրների բացահայտմանն ուղղված գիտական հետազոտությունները (վերջին տարիներին միայն մեկ ընդգրկուն հետազոտություն է իրականացվել)¹¹, որոնք կարող էին նպաստել վիկտիմոլոգիական կանխման արդյունավետությանը:

Կարծում ենք, որ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հանցավորության ու դրա առանձին տեսակների վիկտիմոլոգիական կանխմանը, որն իրենից պետք է ներկայացնի պետական ու հասարակական միջոցառումների համակարգ՝ ուղղված բնակչության ու առանձին անձանց հանցագործության զոհ դառնալու ռիսկի նվազեցմանը: Իսկ դրա համար անհրաժեշտ են հանրապետությունում հանցավորության վիկտիմոլոգիական խնդիրների բացահայտմանն ուղղված գիտական խոր հետազոտությունների իրականացում, դրանց հիման վրա հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխմանը և բնակչության վիկտիմոլոգիական գիտելիքների մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակում ու իրականացում:

АРА ГАБУЗЯН – К вопросу о состоянии криминальной виктимизации в Республике Армения. – Согласно официальной статистике, с 2004 по 2010 гг. уровень криминальной виктимизации в Армении вырос в 2,5 раза. Между тем уровень преступности за то же время вырос в 1,5 раза. Очевидно, что виктимизация растёт более интенсивно, чем преступность, что обусловлено изменением в структуре последней. За указанные годы увеличился удельный вес таких преступлений,

¹¹ Տե՛ս **Ա. Ռ. Մարգարյան**, Հանցավորության նկատմամբ վախը և վիկտիմիզացիան Հայաստանի Հանրապետությունում, «Բանբեր Երևանի Համալսարանի, Իրավագիտություն», թիվ 135.3, 2011, էջ 19-41:

как разбой, грабёж, мошенничество, изнасилование, которые могут нанести вред одновременно нескольким потерпевшим. Кроме того, наблюдалась интенсивная виктимизация таких групп населения, как женщины, несовершеннолетние, пенсионеры, инвалиды, иностранцы.

Статья констатирует, что в Армении нет национальной программы виктимологической профилактики преступности и не проводятся виктимологические исследования. В связи с этим предлагается обратить особое внимание на виктимологическую профилактику и повысить крайне низкий уровень виктимологических знаний населения.

ARA GABUZYAN – *Criminal Victimization of the Population in the Republic of Armenia.* – According to official crime statistics, over a period of 2004 – 2010 the level of criminal victimization in the Republic of Armenia has increased in 2,5 times while the level of criminality only in 1,5 times. It is obvious that in comparison to the criminality level, the level of victimization has shown more intensive growth. The main reason of such a situation is the criminality structure change: the main shift was towards the increase of the portion of such crimes as assault, rape, robbery, theft, burglary, fraud . It is well known that these are the crimes which usually cause harm to two or more victims.

During the period of 2004-2010 females, juveniles, elderly and handicapped people, foreigners experienced victimization more frequently than the other groups of population.

Thus, a steady increase of the victimization trend is observed in the Republic of Armenia.

The author states that there is neither national program on victimological prevention of crimes nor sufficient research in this area.

The author suggests to pay special attention to victimological prevention of crimes, especially by means of conducting research in this field and taking measures to rise the level of RA populations' victimological knowledge.